



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 նոյեմբերի 2015 թվականի N 1361 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի
N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության մարզերի՝ 2015 թվականի նոյեմբեր ամսին ուժեղ քամիների հետևանքով համայնքներին հասցված վնասների հետևանքները վերացնելու առաջնահերթ նպատակով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացնել 733147.8 հազ. դրամ, այդ թվում՝

1) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանին՝ 204.414,4 հազ. դրամ՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին՝ 12,690.3 հազ. դրամ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանին՝ 14,614.0 հազ. դրամ՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանին՝ 240.000,0 հազ. դրամ՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին՝ 123,694.5 հազ. դրամ՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին՝ 6,327.7 հազ. դրամ՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանին՝ 437,9 հազ. դրամ՝ համաձայն N 7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին՝ 17,100.6 հազ. դրամ՝ համաձայն N 8 հավելվածի.

9) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին՝ 113,868.4 հազ. դրամ՝ համաձայն N 9 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման NN 11 և 12 հավելվածներում կատարել լրացումներ՝ համաձայն NN 10, 11 և 12 հավելվածների:

3. Սահմանել, որ սույն որոշման վրա չի տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարություն 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 20-րդ կետով սահմանված դրույթը:

4. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետներին սույն որոշման N 1 հավելվածի 3.1-ին կետով, N 2 հավելվածի 2.1-ին կետով, N 3 հա-

վելվածի 3.1-ին կետով, N 4 հավելվածի 3.1-ին կետով, N 5 հավելվածի 3.1-ին կետով, N 6 հավելվածի 1.1-ին կետով, N 8 հավելվածի 3.1-ին կետով և N 9 հավելվածի 3.1-ին կետով նախատեսված գումարները բնակիչներին բաշխել համապատասխան մարզպետի որոշման հիման վրա՝ հիմք ընդունելով վսասներն արձանագրած հանձնաժողովների ակտերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2015 թ. նոյեմբերի 26
Երևան



Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2015 թվականի
նոյեմբերի 19-ի N 1361 - Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ**

(հազ. դրամ)

NN ը/կ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների և աշխատանքների անվանումները	Տարի
	ԸՆԴԱՄԵՆԸ	240,000.0
	այդ թվում՝	
1	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	74,743.0
	որից՝	
1.1	Վանաձոր համայնքի թիվ 27 դպրոցի տանիքի վերանորոգում	28,000.0
1.2	Վանաձոր համայնքի թիվ 16 դպրոցի տանիքի վերանորոգում	9,000.0
1.3	Ստեփանավան համայնքի թիվ 3 դպրոցի տանիքի վերանորոգում	4,250.0
1.4	Վարդաբլուր համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	500.0
1.5	Ալավերդի համայնքի դպրոցների տանիքների վերանորոգում	10,000.0
1.6	Աքորի համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	7,378.0
1.7	Մղարթ համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	1,870.0
1.8	Զկալով համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	500.0
1.9	Ուռուտ համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում	10,245.0
1.10	Բովաձորի համայնքի դպրոցի պատուհանների վերանորոգում	3,000.0
2	Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	58,532.0
	որից՝	
2.1	Վանաձոր համայնքի Կոմիտասի անվան արվեստի դպրոցի /ապակի/տանիքի վերանորոգում	5,000.0

2.2	Վանաձոր համայնքի Ստ. Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցի տանիքի վերանորոգում	1,000.0
2.3	Վանաձոր համայնքի Ստ. Զորյանի տուն-թանգարան/Բազալտի սալիկներ/	650.0
2.4	Վանաձոր համայնքի կերպարվեստի թանգարանի տանիքի վերանորոգում	5,000.0
2.5	Վանաձոր համայնքի Հորովել համոյթի շենքի տանիքի վերանորոգում	910.0
2.6	Վանաձոր համայնքի Տիկնիկային թատրոնի տանիքի վերանորոգում	2,080.0
2.7	Վանաձոր համայնքի մանկապարտեզների շենքերի տանիքների վերանորոգում	3,341.0
2.8	Վանաձոր համայնքի մարզադպրոցների տանիքներ վերանորոգում	5,000.0
2.9	Վանաձոր համայնքի կոմունալ օբյեկտների տանիքների վերանորոգում	6,500.0
2.10	Հավարի գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում	390.0
2.11	Հոբարձի գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում	1,560.0
2.12	Հովնանաձոր գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում	1,235.0
2.13	Վարդաբլուր համայնքի գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում	200.0
2.14	Վարդաբլուր համայնքի մշակույթի շենքերի տանիքների վերանորոգում	200.0
2.15	Ալավերդի համայնքի մանկապարտեզների շենքերի տանիքի վերանորոգում	3,000.0
2.16	Ախթալա համայնքի համայնքային կենտրոնի շենքերի տանիքի վերանորոգում	7,135.0
2.17	Դսեղ համայնքի մանկապարտեզի, մշակույթի տան և գյուղապետարանի շենքերի տանիքների վերանորոգում	4,000.0
2.18	Մարց համայնքի գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում	650.0
2.19	Շամուտ համայնքի գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում	325.0
2.20	Քարինջ համայնքի մանկապարտեզների շենքերի տանիքի վերանորոգում	390.0
2.21	Կաթնառատ համայնքի համայնքային կենտրոնի շենքերի տանիքի	3,600.0

	վերանորոգում	
2.22	Մեծավան համայնքի մշակույթի տան շենքերի տանիքի վերանորոգում	960.0
2.23	Լուսաղբյուր համայնքի մանկապարտեզների շենքերի տանիքի վերանորոգում	2,000.0
2.24	Մեծ Պատնի համայնքի գյուղապետարանի պահեստի շենքի տանիքի վերանորոգում	1,430.0
2.25	Սարալանջ համայնքի գյուղապետարանի պահեստի շենքի տանիքի վերանորոգում	1,976.0
3	Այլ նպաստներ բյուջեից	102,725.0
	որից՝	
3.1	Պետական աջակցություն մարզի քամուց տուժած բնակիչներին հասված վնասների փոխհատուցման նպատակով	102,725.0
4	Նախագծահետազոտական ծախսեր	4,000.0
	որից՝	
4.1	Ծրագրերի նախագծահետազոտական աշխատանքների կազմում	4,000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ